ՀՈՒՅԶԵՐԻ ԿԱՐԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոգեկանի սուբյեկտիվ երևութաբանության ոլորտում հուզական ապրումը ներկայանում է անմիջականորեն, ընկալվում և գիտակցվում առանց ուշադրության կենտրոնացման կամային ճիգերի, որ ճանաչողական գործունեության կարևորագույն նախապայմաններից է: Անհատի գիտակցությանը «միանգամից բացվող» հույզի նշանակալիությունը, սակայն, հաճախ ապրվող զգացմունքի հստակ նույնականացում (идентификация), տարբերակում և լեզվական կարգայնացում չի ենթադրում:

Պատճառն այն է, որ լեզուն հույզի արտահայտության պլանի զարգացման՝ վիսցերալ ռեակցիաներ-միմիկա-ժեստ-խոսք պատմական շղթայում բարձրագույն և որակապես տարբեր աստիճան է ներկայացնում: Հույզի արտահայտման մինչխոսքային ձևերը ներկայացնում են հուզական ռեակցիայի երկբևեռ՝ կենտրոնական (հոգեկան) և ծայրամասային (արտահայտման) դրսևորման արտաքին կողմը[1]: Նշանաբանական իմաստով՝ դրանք պարզապես հայտանիշներ են. արտահայտում են հուզական ապրումն այնպես, ինչպես մասն է ներկայացնում ամբողջը: Հույզերի արտահայտման ծագումնաբանորեն հնագույն, մինչլեզվական արտահայտչաձևերը մասնակցում են մարդկային զգացմունքների լեզվական հաղորդակցմանը՝ իբրև հարալեզվական միջոցներ:

Հույզերի «մարդկային» արտահայտման՝ լեզվական հաղորդման մակարդակում ապրումի դրսևորման կենտրոնական և ծայրամասային բևեռները միջնորդված են գիտակցության կարգային կառույցներով՝ տարաբնույթ նշանակությունների համակարգերով, որոնք ձևավորվում են օնտոգենեզում՝ հոգեկանի հասարակայնացման գործընթացում: Այլ խոսքով՝ հոգեկանի հուզական ոլորտի մշակութայնացման ընթացքում մարդկային ապրումների

1. Выготский Л. С. „Психология искусства „, Москва, 1968.

արտահայտությունը միջնորդվում է ընդհանրացման և վերացարկման տարբեր աստիճաններ ներկայացնող լեզվական նշանակություններով, որոնք մասնակցում են նաև հասուն մարդու հույզերի կոնկրետ-իրադրային գործունացմանը: Հույզի ապրումի և արտահայտման օնտոգենետիկ զարգացման գործընթացը վերարտադրում է մարդկային ապրումների ձևավորման և դրանց լեզվական կարգայնացման բազմահազարամյա պատմությունը: Այդ պրոցեսի որոշ փուլերին վերաբերող «խոսուն վկայություններ» պահպանվել են մարդկային լեզվի բառիմաստային համակարգում, որոնց ճանաչողական վերաբերության քննությունն է այս հոդվածի հիմնական խնդիրը:

Հետագա շարադրանքում արտահայտված եզրահանգումներում մենք ելնում ենք հետևյալ հիմնադրույթներից.

ա) Թեև լեզվական նշանը հասկացության ձևավորման և գիտակցական ամրակայման կարևորագույն միջոցն է, ոչ լեզվական գիտակցությունը, ոչ էլ դրա գործընթացային գոյատեսակը՝ խոսքային մտածողությունը, ամբողջությամբ հասկացական մտածողությանը չեն հանգում: Ինչպես մարդկային վարքն առհասարակ, այնպես էլ մտածողությունն ու խոսքը անհամասեռ են՝ մշտապես զարգացման միևնույն՝ բարձրագույն մակարդակը չեն ներկայացնում: Խոսքային մտածողությունը գործ ունի արտացոլման և ընդհանրացման տարբեր մակարդակի միավորների հետ. դա իր արտահայտությունն է գտնում նաև խոսքային մտածողության առանցքային միավորի՝ նշանակության կառուցվածքում, որտեղ յուրօրինակ կերպով համագոյակցում են խոսքի և մտածողության զարգացման ծագումնաբանորեն տարբեր փուլերը: Բացի այդ, Լ.Ս.Վիգոտսկու[1] և Ժ. Պիաժեի[2] հայեցակարգերից տեղեկանում ենք, որ մարդկային խոսքի և մտածողության ակունքները միանգամայն տարբեր են. օնտոգենեզում դրանք սկզբնապես զարգանում են միմյանցից անկախ: Լեզվական գիտակցությունը ձևավորվում է այն պահին, երբ առանձին զարգացող այդ ուղիները միավորվում են, երբ մտածողությունը, լեզվական

1. Выготский Л. С. „Мышление и речь„ М-Л, 1934.
2. Пиаже Ж. „Речь и мышление ребенка„ . Москва, 1932.

նշաններով միջնորդվելով, վերակառուցվում է՝ վերածվում խոսքային մտածողության: Դա, սակայն, ըստ Լ. Ս. Վիգոտսկու պնդման, չի նշանակում, թե այդ պահից սկսած՝ մարդկային մտածողությունն ամբողջովին խոսքային է, իսկ խոսքի ցանկացած ակտ անպայմանորեն վերաբերում է խոսքային մտածողությանը: Մեզ հետաքրքրող խնդրի համատեքստում սա նշանակում է, որ

1. Հույզի լեզվական արտահայտությունը անհրաժեշտորեն խոսքային մտածողություն չի ենթադրում (օր.՝ ձայնարկություն, հնչերանգ) :

2. Հույզի լեզվական արտահայտման այն միջոցները, որոնք հանգում են խոսքային մտածողությանը, պարտադիր կերպով հույզի նշանակության բարձրագույն՝ հասկացական մակարդակին չեն վերաբերում (օր.՝ նշանակություն):

Համաժամանակյա պլանում ի հայտ եկող տարասեռությունը տարժամանակյա (պատմական և օնտոգենետիկ) կտրվածքում նշանակում է լեզվական նշանակության զարգացում՝ չտարորոշված սինկրետայնությունից մինչև հասկացություն: Արտահայտության պլանում այդ զարգացումը զուգակցվում է բնականություն-պատճառաբանվածությունից դեպի պայմանականություն անցումով: Ի դեպ, լեզվի նշանի բովանդակության և արտահայտության պլանները ի սկզբանե միմյանց բռնակցված չեն. արտահայտության միջոցների բնույթը ֆիլոգենեզում պայմանավորված է հոգեկան արտացոլման մակարդակով:

բ) Խոսքային մտածողության անհամասեռության մասին վերոհիշյալ դրույթը հավասարապես վերաբերում է նաև մարդու հուզական գործունեությանը: Թեև մարդկային մշակված հույզերը, ի տարբերություն կենդանական աֆեկտների, այլևս անմիջականորեն կապված չեն այսրոպեական պահանջմունքների հետ, միջնորդված են հասարակության բարոյական փորձը խտացնող նշանային միջոցներով, այնուամենայնիվ, դրանք պահպանում են բնական աֆեկտայնությունը, որն էլ, շրջանցելով հուզական վարքի հասարակական կաղապարները, գտնում է արտահայտության բնական ձևեր:

Հույզերի և հոգեկան, և արտաքին-արտահայտչական դրսևորման անմիջական-աֆեկտային ձևերը մինչև վերջ չեն միջնորդվում և մշակվում: Ավելին՝ դրանք ներգրավվում են հուզական վարքի հասարակական

կաղապարների մեջ՝ անհրաժեշտ ֆոն ստեղծելով հույզերի ապրումի և արտահայտման մշակութային ձևերի համար:

Այս առումով, մարդու հուզական գործունեությունն ուսումնասիրող շատ գիտակարգերի, այդ թվում և հույզերի հոգելեզվաբանական հայեցակարգի մի շարք հիմնահարցերի լուծման տեսանկյունից կարևորագույն մեթոդաբանական նշանակություն ունի անմիջական հուզական հակազդման (պայմանականորեն աֆեկտ) և մարդկային գիտակցված հույզի տարբերակման սկզբունքը: Անմիջական հուզական հակազդումը իմաստավորված հույզի առաջնային, վերացական ազդանշումն է :

Աֆեկտը բնական չտարորոշված ռեակցիան է, հույզը՝ աֆեկտի ռեֆլեքսիվ իմաստավորումը անհատի հոգեկանում: Այսպիսի տարբերակումն, անշուշտ, զուտ վերլուծական նպատակներով է արդարացված. իրականում այս երկու հոգեկան գործընթացները անբաժանելի միասնություն են կազմում: Հույզի և աֆեկտի փոխհարաբերությունը ևս, ինչպես օբյեկտիվ արտացոլման տարբեր մակարդակներինը (զգայական հյուսվածք - հասկացություն), կարելի է դիտարկել իբրև ֆիլո- և օնտոգենետիկ զարգացման ծագումնաբանորեն տարբեր փուլերի ակտուալ գոյակցություն առավել բարդ հոգեկան գործառույթի՝ մարդկային հույզի կառուցվածքում:

Սա իր արտահայտությունն է գտնում նաև հոգելեզվաբանական կաղապարի զանազան ըմբռնումներում: Պատահական չէ, որ Չ.Օսգուդը մեծածավալ միջմշակութային ուսումնասիրությունների արդյունքում «ուժգնություն», «ակտիվություն» և «գնահատում» գործոն-կատեգորիաներով չափվող համամարդկային իմաստաբանական տարածությունը հայտնաբերելով, այն սկզբում կոչեց կոնոտատային, հետագայում՝ աֆեկտային՝ շեշտելու համար այդ համակարգի ռեակտիվ բնույթը:

Լեզվական նշանակության հուզական երանգը, այսինքն՝ նշանակության կառուցվածքում աֆեկտային բաղադրիչների առկայությունը, բացատրվում է կամ նշանակության փուլային սերման խորքային մակարդակի աֆեկտային բնույթով, կամ էլ նշանակության գործունացման պրոցեսում աֆեկտային և առարկայական իմաստաբանական տարածությունների միաժամանակյա աշխատանքով :

Նշանակության այս խորքային մակարդակի հիմքում ընդհանրացման պարզագույն ձևն է՝ սինեսթեզիան, որ տարրական սենսորային զգայությունների և աֆեկտային ռեակցիաների միջև հախուռն զուգորդումների արդյունք է: Այս համակարգի հոգեբանական մեխանիզմները ավելի խորքային են, քան մշակույթից մշակույթ փոփոխվող աֆեկտային նշանակությունների ներկայացման ձևերը:

Աֆեկտային իմաստաբանական տարածությունը, այնուամենայնիվ, վերացարկման արդյունք է. կոնկրետ առարկայական ոլորտների վերաբերմամբ կիրառելիս վերոհիշյալ երեք գործոններին միանում են նաև այլ՝ օբյեկտիվ բնույթի չափանիշներ, թեև ամենից ինֆորմատիվը առարկայի առաջնային ճանաչողության գործընթացում հենց առանձնացված աֆեկտային գործոններն են: Սա նկատի ունենալով՝ կարելի է պնդել, որ աֆեկտային ճանաչողությունը՝ ևԲ ֆիլոգենեզում, ևԲ օնտոգենեզում, ևԲ նշանակության գործունացման պրոցեսում ոչ միայն մարդկային վերաբերմունքի դրսևորման , այլև առհասարակ մարդկային ճանաչողության ամենաառաջնային մակարդակն է:

Անհատական գիտակցության ոլորտում զարգացում է ապրում հուզաճանաչողական այս դինամիկ կոնտինուումի ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ բաղկացուցիչը՝ անցնելով հոգեկան արտացոլման զարգացման, նշանակության ձևավորման միևնույն փուլերը:

Հույզը գիտակցության մեջ կարող է հանդես գալ իբրև բնախոսական ռեակցիայի անմիջական ընկալում (աֆեկտ), իբրև իմաստ (պատկեր), իսկ երկրորդական ռեֆլեքսիայի արդյունքում նաև իբրև նշանակություն (հասկացություն): Անմիջական աֆեկտային ընկալման լեզվական արտահայտությունը միջնորդված չէ գիտակցության կարգային կառույցներով, հետևաբար խոսքային մտածողության միավոր չէ, մինչդեռ հույզի լեզվական նշանակությունը զարգանում է պատկեր-հասկացություն օնտո- և ֆիլոգենետիկ առանցքում: Եթե այս գործընթացի օնտոգենետիկ զարգացման փուլերը դիտարկելի են երեխայի հոգեկանի հանրայնացման ուսումնասիրություններում, ապա հույզի նշանակության պատմական կայացման հանգուցակետերի արծանագրողը լեզուն է՝ երևույթների անվանման իր բազմաբնույթ միջոցներով: Այս հանգամանքն էլ

հնարավոր է դարձնում հույզի լեզվական արտահայտության զանազան միջոցների ճանաչողական հիմքի բացահայտումը:

Ընկալում-պատկեր-հասկացության առանցքում հույզի գիտակցական ներկայացման զարգացումը սերտորեն կապված է ճանաչողության առարկայական կողմի էվոլյուցիայի հետ: Հույզի և ինտելեկտի միասնության մասին Լ.Ս.Վիգոտսկու հիմնադրույթը ենթադրում է ճանաչողության առարկայական բովանդակության և դրա առթիվ ծագած հուզական վերաբերմունքի միասնական արտացոլում գիտակցության բոլոր մակարդակներում[1]: Հույզի և ճանաչողության առարկայի միջև հարաբերության բնույթը նույնը չէ ապրումի գիտակցական ներկայացման և լեզվական արտահայտման տարբեր ձևերում: Եթե մարդկային իմաստավորված հույզերը առարկայական են՝ արտացոլում են հուզական հակազդման պատճառ հանդիսացող առարկան, թեկուզ և իր նշանակալից հատկանիշների տեսանկյունից, ապա ընկալման մակարդակում «աֆեկտը կամ չի ճանաչում իր առարկան, կամ էլ միանշանակ կապի մեջ է նրա հետ»[2]: Հուզական ապրում-առարկա կապն աստիճանաբար առավել միջնորդված ու բարդ բնույթ է ձեռք բերում ճանաչողության զարգացմանն ու լեզվի յուրացմանը զուգընթաց՝ որակապես տարբերվելով ընկալման, գիտակցության և ինքնագիտակցության մակարդակներում: Պատմական կտրվածքում այս գործընթացներին ներդաշնակ փոխվում և բարդանում են նաև հույզի լեզվական արտահայտության միջոցները: Սակայն ինչպես առհասարակ հոգեկանի և մասնավորապես մարդկային հույզերի զարգացումը տեղի է ունենում ոչ թե հին որակների՝ նորերով փոխարինվելու, այլ առավել բարդ գործառույթի կազմում հնի՝ օժանդակ դեր ստանձնելու ճանապարհով, այնպես էլ հույզերի լեզվական արտահայտության զարգացումը չի հանգեցնում առավել պարզ արտահայտչաձևերի կորստին: Այդ օրինաչափությամբ է բացատրվում մարդկային հույզերի՝ հասկացությամբ միջնորդված լեզվական արտահայտության միջոցների կողքին ձայնարկությունների գոյությունը, որոնց հաղորդակցական գործառույթը չտարորոշված աֆեկտի անմիջական հաղորդումն է:

---

1. Выготский Л. С. „Мышление и речь„ . М-Л . 1934 .
2.Тхостов А. М., Колымба И. Г. Феноменология эмоциональных явлений . // Вестник московского университета. серия 14.

Առարկայական վերաբերության և անվանողական գործառույթի բացակայությունը, սակայն, դեռևս բավարար հիմք չէ ձայնարկությունը հույզերի բնական–հայտանշային դրսևորման ձևերի հետ միանշանակորեն նույնացնելու համար: Որոշակի հաղորդակցական փորձ ունեցող մանկան հուզական ճիչն արդեն իր մեջ երկվություն է կրում. աֆեկտի «բնախոսական» արտահայտություն լինելուց բացի, այն արդեն իսկ հաղորդակցական ուղղվածություն և կամայականության որոշակի տարրեր ունի: «Երեխայի ճիչը վախի արտահայտությունից վերածվում է այն տիրելու և վերահսկելու գործիքի՝ օգնության կոչի»[3]: Եթե հուզական ճիչը իբրև արտահայտման միջոց սուբյեկտիվ- անկրկնելի է, ապա ձայնարկությունը, լեզվական համակարգի միավոր լինելով, օբյեկտիվ է և ուրեմն հասարակական լեզվագիտակցության սեփականությունն է, կարող է ճանաչվել և համարժեք կերպով «հետկոդավորվել» տվյալ հանրության բոլոր անդամների կողմից, նաև առանց իրադրության կողմնորոշիչների: Այս տեսանկյունից ձայնարկությունը ավելի մոտ է լեզվի կամայական նշաններին, քան բնական ճիչերին. ձայնարկության կիրառությունը խոսքում իբրև անհրաժեշտ պայման ենթադրում է լեզվի իմացություն: Խոսողի կողմից այն ընտրվում է կամային կերպով՝ իր հոգեկանի որոշակի վիճակները նշանակելու և հաղորդելու գիտակցական միտումով: Եթե լեզվի բուն նշանների հետ ձայնարկությունը նույնանում է իբրև հաղորդման կամային, գիտակցական միջոց, ապա տարբերվում է նրանցից իր իմաստային կողմով՝ չմիջնորդված կերպով վերաբերելով հոգեկանի աֆեկտային վիճակներին:

Ձայնարկության անմիջականությունը պայմանավորված է արտացոլման ռեֆլեքսիվ ձևերում (պատկեր, հասկացություն) կարգայնացված առարկայական բովանդակության բացակայությամբ, որն էլ արտահայտության առավել զարգացած միջոցներում միջնորդում է ապրում-լեզվական նշան կապը: Աֆեկտի առարկան լուծված է նրա չտարորոշված սուբյեկտ-օբյեկտային կոնտինուումի սինկրետիկ կազմում, որն էլ նույնությամբ վերարտադրվում է ձայնարկության բովանդակության պլանում: Նշանակության զարգացումը աֆեկտային կոնտինուումի հուզական և առարկայական բաղադրիչների

---

3. Тхостов А. М., Колымба И. Г. указ. соч .

հաջորդական վերլուծման և տարբերակման ընթացքն է: Եթե ընկալման փուլում ճանաչողության առարկայական բովանդակությունը տարրալուծված է աֆեկտի մեջ, ապա հոգեկան արտացոլման պատկերային մակարդակում հույզը (կեղծ) առարկայական (квази)предметный) միջնորդում ունի: Հույզի նշանային միջնորդումը և իմաստավորումը սկսվում է գիտակցության մեջ հույզը հարուցող առարկայի պատկերով: Ապրումն առաջ բերող ու նրա գիտակցումը միջնորդող առարկայական ոլորտի բազմազանությանը համապատասխան տեղի է ունենում աղքատիկ աֆեկտային ոլորտի մասնատումը՝ հանգեցնելով մարդկային տարբերակված հույզերի ըստ էության անսահմանափակ երանգաշարին:

Ինչպես աֆեկտը «փոխանվանորեն», չափազանց վերացականորեն է ներկայացնում մարդկային իմաստավորված հույզը, այդպես էլ ցանկացած լեզվի ձայնարկությունների համակարգը միայն ամենաընդհանուր կերպով է արտացոլում տվյալ մշակույթում տարբերակված հույզերի լայն շրջանակը: Այդ պատճառով էլ բոլոր ձայնարկությունները, որպես կանոն, բազմիմաստ են, որի հիմքում, սակայն, իմաստային փոխանցումը չէ, այլ բառային այդ միավորի բովանդակության լայն՝ աֆեկտային ընդգրկումը: Կոնտեքստից կախված՝ յուրաքանչյուր ձայնարկություն կարող է հաղորդել հույզերի մի ամբողջ գամմա:

Օնտոգենեզում և ֆիլոգենեզում արտացոլման պատկերային ձևերի ծագումը երկատում է ճանաչողության միասնական դաշտը. պատկերի կառուցվածքում արտացոլվում են առարկայի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հատկանիշները: Լեզվական նշանակության կառուցվածքում սա իր արտահայտությունն է գտնում նշանակության և իմաստի, դենոտատային և նշանակցական բաղադրիչների զուգակցման մեջ: Թեև շատ լեզվաբանների կարծիքով բառիմաստի հասկացական և հուզագնահատողական բաղադրիչները իրավահավասար են, այնուամենայնիվ հույզերի նշանակցային կարգայնացումը, ասել է թե՝ առարկայականացումը ու իմաստավորումը ածանցվում է ճանաչողության օբյեկտիվ բովանդակությունից: «Իմաստն իր բնույթով ածանցյալ է. այն միշտ որևէ կոնկրետ բանի՝ պատկերի, գործողության,

նշանակության, կյանքի իմաստ է ....»[1]: Իմաստը սերտորեն կապված է անհատի պահանջմունքների մոտիվների հետ և այդ պատճառով մշտապես արտածվում է գիտակցության պատկերի առարկայական «կորիզում» արտացոլվող երևույթների և մոտիվների օբյեկտիվ հարաբերությունից : Այլ խոսքով՝ պատկերի մակարդակում մարդկային հույզերը պատճառային բացատրություն են ստանում. պատկերի էքստերոցեպտիվ բաղադրիչներում արտացոլվում է հույզի պատճառ հանդիսացած արտաքին առարկան կամ երևույթը: Այդպիսով հույզի նշանակցային կարգայնացման հիմքում գիտակցության պատկերային մակարդակն է: «Նշանակցային հասկացությունը մշտապես պատկերացման տարր է պարունակում »[2]:

Սա բացատրվում է այն հանգամանքով, որ գիտակցության իմաստային գործընթացները գերազանցապես պատկերային բնույթ են կրում:

Ճանաչողական իրադրությունից, անհատի հոգեվիճակից կախված՝ պատկերի հավասարակշռությունը կարող է խախտվել մերթ առարկայի օբյեկտիվ, մերթ էլ սուբյեկտիվ հատկանիշների կողմը: Վերջին հանգամանքն էլ հիմք է տալիս շատ գիտնականների խոսելու հուզական ճանաչողության գոյության մասին: Մասնավորապես Ա. Վ. Զապորոժեցը կարծում է, որ հուզականորեն խիստ հագեցած ճանաչողական իրադրություններում անհատի համար հատկապես նշանակալից առարկաներն ու երևույթները գիտակցությունը արտացոլում է հուզական պատկերների ձևով: Այդպիսի պատկերներում, ըստ Ա. Վ. Զապորոժեցի, չափազանցված են այն հատկանիշները, որոնք անհատին ներկայացնում են առարկաների և իրաղարծությունների իմաստը[3]: Գ.Հովհաննիսյանի հոգելեզվաբանական կաղապարում գիտակցության պատկերի հավասարակշռության այդպիսի խախտումը արտահայտվում է կոնոտատ-կոնսիգնատ առանցքի ընդլայնմամբ: «Բառի տվյալ իմաստով կիռարման և որոշ ընդհանրացման աճին զուգահեռ կոնոտատիվ իմաստը

---

1. Зинченко В. П. Миры сознания и структура сознания .// Вопросы психологии. 1991. N2 с. 15-17
2. Говердовский В. М. Опыт функционально-типологического описания коннотации. Москва. 1977.
3. Запорожец А. В. Об эмоциях и их развитии у ребенка. // Развитие социальных эмоций у детей дошкольного возраста . Москжа . 1986 с. 7-32

օբյեկտավորվում է և նշանակության արժեք է ստանում տվյալ հաղորդակցական միջավայրում, դառնալով գիտակցության մեջ կամ բառարաններում գրանցված նշանակություն »[1]: Ինչպես արդեն նշվեց վերևում, հույզը լեզվական գիտակցության մեջ կարող է կարգայնացվել նաև իբրև նշանակություն, այսինքն՝ ամրակայվել լեզվական նշանակության հասկացական միջուկում: Լեզվի բառիմաստային համակարգում հույզի նշանակության կրողներ են տարբեր անուն խոսքի մասեր ընդգրկող հուզանունները (օր՝ սեր, ատելի, խանդել և այլն): Այս տիպի լեզվական նշանակություններում հույզն արդեն հանդես է գալիս ոչ թե որպես օբյեկտիվ բովանդակության սուբյեկտիվ երանգ՝ կոնոտատ, այլ իբրև արտաքին վերաբերության օբյեկտ՝ դենոտատ: Հույզի ապրումի այսպիսի օտարումը և արտաքին առարկայական աշխարհից, և անհատից, և ինտելեկտուալ պրոցեսներից ենթադրում է գիտակցության ինքնառեֆլեքսիա և հնարավոր է դառնում ապրումի նշանային միջնորդվածության շնորհիվ: Հույզի ռեֆլեքսիան փաստորեն իրականանում է ոչ թե ուղղակիորեն ապրումի՝ գիտակցության մեջ արտացոլվելու միջոցով, այլ անուղղակիորեն՝ նշանային միջնորդավորումով: Հույզը գիտակցության ոլորտում կարող է կաղապարվել և միջնորդվել ոչ միայն լեզվական նշանի, այլև հուզական դերային գործունեության ընդհանրացված պատկերի միջոցով: Եթե նկատի ունենանք, որ Ա. Ն. Լեոնտևի հայեցակարգում նշանակությունը սահմանվում է իբրև արտաքին գործունեության ներմիտման արդյունք, ապա կարող ենք պնդել, որ հույզի ռեֆլեքսիվ օբյեկտավորման հիմքում հուզական գործունեության հասարակական կաղապարներն են:

---

1. Հովհաննիսյան Գ. Լ. «Ժամանակի հոգելեզվաբանական հայեցակարգը», էջ 546, Երևան, 2001 :